

ների վիճակին հանդիպեցան, և այն ժողովրդի հաւատը միշտ կայ ու կայ իւր հետը, չնայելով, որ գրեթէ ամեն մի գար ամեն ջանք և ոյժ է բանեցրել որ ջնջէ նորան:

Թարգմ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Եթզէհէմից երկու վերստ հեռու կայ մի փոքրիկ դաշտ, ուր ձիթենեաց անտառում կանգնած է մի աղքատիկ և կարծես անտէր թողած մատուռ որ շինուած է յանուն Հրեշտակապետին «Աւետաբերին Հօվուաց»։ Ըստ աւանդութեան այդ մատուռը հիմնարկուած է ճիշտ այն տեղում, ուր քրիստոնեայ ականջաց քաղցրալուր աւետեաց համաձայն, որ տալիս է սուքբն Ղուկաս—Հովիւք էին ի տեղուջն այնմիկ բացօթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։ Եւ հրեշտակ ծեառն երևեցաւ նոցա, և փառք ծեառն ծագեցին առ նոսաւ։ և լսեցին նոքա ուրախարար աւետիուր, որ այն օրը ծնաւ Փրկիչը, որ է Քրիստոս Տէր, Դաւթի քաղաքում։

Փրկիչ ծննդեան պարագայքը վերին աստիճանի աղքատիկ էին և ամեն բան այդ տեղում՝ ցոյց էր տուլիս քաւորութիւն և ծանր աշխատաւոր կեանք։ Պէտք էր որ այդ գիշեր բացուէր երկինքը. լուսապայծառ երգիչների մեծաձայն փառաբանութեամբ լըցուած, աստղերը և արածող հօտերը, լուսոյ և ձայների խառնուրդը գիշերային լուսութեան մէջ, հաւատացեալ սրտերի ցնծութիւնը—այս բոլորը գոյներ են, որով կարելի է սքանչելի, երկնային և հրաշալի պատկերը նկարել։ Բայց աւետարանչի համառօտ և սրտաշարժ պատմութիւնը չէ ասում մեզ, որ հրեշտակների երգը լսելի էր և ուրիշներին, բացի չնչին գիւղի անքուն հովիւներից, որոնք ցուրտ և խոնաւ ձմեռնային գիշերով պահպանումէին իրանց հօտը գայլերից և աւազակներից—նոյն իսկ գաշտում, ուր Փրկիչ նախամայրը՝ Հուութ, վշտահար սրտով, ուրիշի արտից ժողովումէր հասկերը և Դաւթի՛ բաղմանդամ՝ ընտառնիքի եղբայրներից կրտսերը և մանկահասը, արածում էր իւր հօր ոչխարները (Ս. Հ. 71)։

« Եւ յանկարծակի » աւելացնումէ արժանայիշատակ գիշերուայ պարսգաները պառումով աւետարանիչը, երբ աշխարհը անտարեր հոգով չէր զգում Աղատյի գալստեան մերձենալը և ծնաւ Քրիստոս, « Եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին. « Փառք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն » :

Կարելի է ակնկալել որ բարեպաշտ քրիստոնէութիւնը նըշնէ այդ տեղը հոյակապ յիշատակարանով և հովուական վայրի այրը զարդարէ մարմարիոն և մողայիքով, դարձնելով նորան հոյակապ տաճար : Սակայն Աւետարեր Հրեշտակի մատուռը է մի հասարակ և անպանոյն խորան և երբ անցորդը իշնումէ ձիթենեաց անտառի դէպի ծմակների խորքը տանող կիսակործան աստիճաններով, դժուարին է մինչև անգամ հաւատալ թէ մարդ սրբավայրում է գտնուում : Սակայն այդ արտաքին ամայութիւնը համապատասխանումէ զուտ ճշմարտութեան : Մատրան խեղճութիւնը գլխովին ներդաշնակ է հովիւների աղքատիկ աշխատանքին, և այդ մատուռն էլ հէնց կանգուն է ի յիշատակ նոցա հրաշալի տեսլեան :

« Եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղէհէմ, և տեսցուք զԲնչ է բանս այս որ եղեւ . զոր Տէր Եցոյց մեզ » ասացին միմեանց հովիւները, երբ հրեշտակների երգը աստղալից երկնքի լուռթեան մէջ կորաւ : Պէտք էր նոցա բարձրանալ առապար բլուրը և անցնել Բեթղէհէմի լուսով ողողուած այգիներով, մինչեւ գորշ լեռնագոտու կատարը համնելը, ուր և հանգչումէ փոքրիկ Բեթղէհէմ քաղաքը : Հէնց ուղիղ լերան գագաթին շինուած էր հիւրանոցը, կամ ինչպէս արևելքում ասում են՝ իւանը :

Ասորական գիւղի խանը կամ կարուանսրահը այն ժամանակ ամենայն հաւանականութեամբ նոյն և նման կըլինէր, թէ արտաքով և թէ դիրքով, այժմեան Պաղեստինում եղածներին : Այդ մի ցած, մեծ մասամբ միայարկ շինութիւն էր լինում : կառուցուած անտաշ կոպիտ քարից սովորաբար մի քառակուսի պարփակուած շէնք կամ ախոռ, ուր կարելի էր գիշերը անասուններին կապել և կամարաձև որաչ՝ ճանապարհորդների համար :

Սրահի յատակի փոռւածքը կամ վեանը, ինչպէս ասումեն Պաղեստինում, անասնատան մակերեսոյթից երեք աստիճան բարձր էր լինում: Մեծ խանը, օրինակ այնպիսին, որի աւերակները տեսնում են Մինեխում, Գալիլէական լճի ափում, ունենումէր այդպիսի մի քանի սրահ, որոնք իսկապէս փոքրիկ եցած սենեակներ էին, առանց առաջի պատի: Հասկանալի է որ այդ պատճառով բոլորովին բաց էին և ինչ որ կատարում էր նոցա մէջ՝ տեսնում էր խանում եղողներից: Նոցա մէջ չէր լինում անհրաժեշտ և ամենահաօարակ կահկարասիք անգամ: Ճանապարհորդը պարտական էր հետոն ունենալ կողինքը, որի վրայ սովորապէս ծալապատիկ նստած կարող էր մի բան ուտել, նախաճաշել և յետոյ նոյն տեղումն էլ պառկել քնելու: Ունենալու էր նաև ուտելու պաշարը, պարտական էր հոգալ անասունները և մօտակայ ջրհորից ջուր բերել:

Այդ խաներում մարդ ոչ սպասումէ և ոչ էլ պանհանջում ծառայութիւն. վճարումէ մի չնչին բան ծածքի, ապահովութեան և յատակի համար, որի վրայ գիշերը կարելի էր անցնել: Բայց եթէ պատահի որ ճամբորդը ուշը մնայ և վեանները բըռնուած լինին, այն ժամանակ միակ ճարն է լինում պատսպարուիլ ախոռում:

Նատ անգամ պատահումէ Պաղեստինում, որ ամբողջ խանը կամ գոնէ նորա այն մասը, որտեղ կենդանիներն են զետեղում, ամբողջապէս բնական այր է: Այդ տեսակ անթիւ այրեր կան կենդրոնական բլուրների կրային ժայռերում: Այդպէս էր ըստ երեսութիւն և Յուգայի Բեթղէհէմ—Եփրաթայ փոքրիկ քաղաքում:

Յուստինիանոս փիլիսոփան, Ներբողաբանը, որ ծննդեամբ Սիւքէմից լինելով լաւ ծանօթ էր Պաղեստինին և Քրիստոսից հազիւ մի դար յետոյ էր ապրում, Քրիստոսի ծննդեան տեղն համարումէ այրը: Այդ մասին աւանդութիւնը ի նախնեաց հետէ պահպաննումէ թէ արևելեան և թէ արևեմոեան եկեղեցիներում և այդ այն աւանդութիւններիցն է, որոնք թէև աւետարանի պատմութեան մէջ չեն մուծ, սակայն պատմական հաւաստիութիւն և վաւերականութիւն ունին: Այդ այրին վրայ այժմն գոտնումէ Ծննդեան եկեղեցին և վանքը. իսկ նորա կողքին մի երկրորդ այրի մէջ՝ եկեղեցւոյ ճարտասան և գիտնական

Հարց մէկը, առաքինազարդն Հերոնիմոս, Լատինական Աստուածոշնչի ականաւոր թարգմանիչը, իւր կետնքի վերջին հրեսուն տարին տնօկոցը գիտնական աշխատաւթեամբ, պահօք և տղօթիւք:

Այսուեղ էր գալիս երկրի հիւսիսային սահմաններից, այն է՝ նազարէթից, որ գտնւումէ Զաքուղոնի լեռներում, ձմերնային ճանապարհներով, Յովսէփը, Կաղուրէթիցի հիւսը, իւր խոսեցեալ կնոջ Մարիամի հետ, որ գտնւում էր յղութեան վերջին օրերում։ Չնայած իրենց աղքատութեանը, նոքա երկուսն էլ ճագում էին Դաւիթ թագաւորի տանից և ցեղից և այժմ հարկադրուած սիէսք է անցնէին սովոր մօտ հարիւր քառասուն վերաս, որ համնին իրենց մեծ նախահօր քաղաքը, Նախահօր՝ որ գեռ մանուկ հասակում, աղքատ հովիւր, արածումէր իւր հօտը ամայի բրուրների վրայ։ Այդ վաստակաբեկ ճանապարհորդութեան, որ ամեններն չէր կարող նոցա դուրեկան լինել, մանաւանդ արևելեան ընդունուած սովորութեանց նայելով, նպատակն էր իրենց անունները իբրև Դաւթի տան անդամ աշխարհագրի (մարդահամար) անցնել, որ և հրամայուած էր Օգոստոս կայսրից։ Հռովմէական կայսրութեան, որի մի մասն էր և Հրէաստանը, այն ժամանակուայ քաղաքական վիճակին նայած, բաւական էր հզօրագոյն կայսեր մի հասարակ ակնարկն անդամ որ նորա հրամանը անխափան կատարուէր քաղաքակրթեալ աշխարհի հեռաւորագոյն անկիւններում։ Բաւարար հիմ և քններ կան կարծելու որ այդ աշխարհագրի առաջին հրամանը հրառարակեց Սենցիոս Սատուռնին։ որ աշխարհագիրն ոկուց Պուբլիոս Սուլպիցի Քուիրին, երբ սա առաջին անդամ փոխ—հիւպատոս էր Ասորիքում և վերջացաւ աշխարհագիրը սորա երկրորդ փոխ—հիւպատութեան ժամանակ։ Հրէական նախապաշարմանց շնորհիւ, որոց ոտնահարութիւնը սորոսափելի շփոթութիւն և ապստամբութիւն էր հանում, մարդահամարը կատարուեց ոչ թէ հռովմէական ձեռք, այն է՝ բնակութեան տեղը հիմք առած, այլ հրէական սովորութեամբ, որ է՝ այն քաղաքում, ուր հնումը այս կամ այն մարդու ընտանիքն էր ապրել։

Հրէաները պահում էին գեռ իրենց ցեղաբանութիւնը և ի վաղւց հետէ կորած ցնդական բաժանմունքների յիշատակը գեռ

պահպանում էին։ Ուստի թէպէտ անախորժ և լքմուարին էր ճանապարհը, այսու ամենայնիւ Յովոէփ տոխովուած էր ուղեռութիւնի թէթդէչէմ թերեւս միիթարուելով իւր ցեղական փառաւոր ծագմամբ, որ այժմն նոյն խսկ իշխանութիւնը պիտի ընդունէր, նաև Մեսոփայի մօտալուտ գալոտեան յօյսերով, որին իւր աչքի առաջ կատարուած բոլոր հրաշալիքները տալիս էին անընկնծելի ապահովութիւն և զօրութիւն։

Արեւելքում ճտնապարհորդութիւնը դանդաղ է կատարուում և երկարատև հանգիստներով. խսկ այդ ժամանակում տւելի և սղանդաղութեամբ եթէ, ինչպէս կարելի է ենթադրել հաւանականաբար, երկիրն էլ գոնուում էր ապօտամբութեան մէջ, Բէթրոթ քաղաքը, որ 25 վերստ հեռու է Թէթդէչէմից, կտոր երուսաղմբ, որ միայն 10 վերստ հեռաւորութեան վրայ է գոնուում, վերջին կայարանն էին Յովոէփի և Մարիամու նշանակած տեղն հանելուց առաջ։ Աշխարհագիրն այնչափ եկաւո՞ր ժողովուրդ հաւաքեց փոքրիկ քաղաքը, որ «ոչ գոյր նոցա տեղի յիշեանին»։ Յոգնած ցերեկուայ ուղեռութիւնից, նպաս աեղաւորուեցան խանին կից այրում, որ ախտուատունն էր, խոտի և յարդի մրայ, և այդ տեղ, տանից հեռու, օտար մարդկանց խմբի մէջ, ցուրտ ձմեռ զիշերը, պարագայից մէջ, որ ոչ միայն որեւ է աշխարհային փայից, այլ և ամեն տեսակ յարժարութիւններց զո՞րկ էր, այնպէս որ չէ կարելի երեակայել աւելի աղքատ ծննդավայր, ծնուեց Քրիստոս։

Ընդ ամենի մի քանի վերստ հեռու այդ տեղից, զառիւայր և տուանձին բարձրացած բլրի տափարակին վրայ, այդ բլուրն այժմ անուանեւումէ Զէրէլ Ֆուրէիդիս կամ «փոքրիկ դրախտային սար», կանգնած էր մեծին Հրովդ Էսի ամրայուծ պալատը։ Բայց Հրէից ճշմարիտ Թագուարը, տիեզերաց արդարադատ Տէրը յայտնուեց ոչ պալատում և ոչ ամրոցում։ Արքունի պալատներում նոքա են, որ կրում են նուրբ և թանկագին զգեստ։ Անառունների մոռուրը աղքատիկ կարուանսրտհում աւելի լինդունելի տեղ էր նորա ծննդեան համար, որ եկել էր աւեսել, որ ամենամեծ ինքնակալի հոգին անգամ Աստուծոյ աչաց առաջ աւելի թանկ չէ և ոչ աւելի մեծ, քան վերջին սորկի հոգին։ Նորա, որ տեղ չունէր իւր գլուխը հանգուցանելու և որ կառավարելու էր աշխարհը նախատանաց խաչի բարձ-

բութեան վրայից:

Գնալով լապտերի ուղղութեամբ, որ կախսւած է լինում սուզորաբար չուանով խանի մոքից—հովիւները մոտան Բեթղէհէմի հիւրանոցը և «գոխն զՄարիամ և զՅովսէփի և զմանուկն եղեալ ի մոռւր»: Բանաստեղծների և նկարիչների երեւակայութիւնը հատաւ այդ տեսարանի հանդիսավառ մեծութիւնը նկարագրելով: Երգեցին նոքա թէ ինչպէս լուսապայծառ հրեշտակները սաւասնումէին այնտեղ, ինչպէս աստղերը իւրեանց ընթացքը յամեցուցին, որպէս զի թափեն իրենց քաղցր և հրապուրիչ լոյսը ժպտացող Մանկան վրայ: Պատկերագրեցին նոքա նորա մսուր—օրօրոցից ճառագայթարձակ արտափայլումը, որ այնպէս լուսաւորել էր ամբողջ քնակարանը, որ բոլոր ներկայ եղողները ստիպուեցան փակել աչքերը այդ հրաշալի փայլից: Բայց այս բոլորը իրողութիւնից շատ հեռու են: Հասարակ հովիւների տեսած փառաւոր մեծութիւնը միայն հաւատոյ աչաց էր տեսանելի, իսկ ինչ որ իրապէս ներկայացաւ նոցա աչացը՝ էր պարզապէս—Գալիլեյի արհեստաւորը, արդէն անցած տարիքով, երիտասարդ մայրը, որի մաոին նոքա և ոչ իսկ գաղափար կարող էին ունենալ որ նա նշանագրուած էր Յովսէփի հետ և կուսական մայր է, Մանուկը գրկում, որին և օգնող չունենալով՝ իւր ձեռքովն էր բալուլում: Խաւարի մէջ ծագող լոյսը նիւթական չէր, այլ հոգեօր պայծառութիւն, մի երկնային արշալոյս որ այցելեց մարդկութեան և լուսաւորեց միայն մի քանի հաւատացեալ և պարզամիտ սրտեր:

Աւետարաններն էլ, որ միշտ հաւատարիմ են ճշմարտութեան և որոշւում են իւրաքանչիւր բառում այնպիսի պարզութեամբ, որ գրոշմն է ճշմարտապատում գրութեան, հասարակ կերպով են խօսում այդ մասին: Նոցա մէջ չկայ այն չափազանց տարօրինակութեանց, խորհրդաւորութեան և հրաշալեաց հետքն անգամ, որով լի են հրէական աւանդութիւնները ապագայ Մեսսիայի համար և կամ պարականոն պատմութիւնները Մանուկ Քրիստոսի վերաբերութեամբ: Աւետարանների զարմանալի կերպով հակասութիւնը առաջին գարերում գրութեած պարականոն աւետարաններին և կամ վերջիններիս վրայ հիմնուած աւանդութեանց է ամենագրական պացոյց իւրեանց պատմական կատարեալ ճշմարտարանութեան:

Մարդկան մոտածմունքները բոլորովին տարբեր են Աստուծոյ գործերից։ Նորա նախախնամութեան մէջ չկայ ոչ շտապիլ և ոչ կասիլ, ոչ վաստակիլ և ոչ ընդհատիլ։ ամենայն ինչ կատարումէ նա փառահեղ լուռութեան մէջ և նորա գործերը տեսանելի են խաւարում ծագող խաղաղ լուսով։ «Նարժուեցան աստուածային խորհուրդները իւրեանց անչափելի խորութեան մէջ, անհատնում հարստութեանց աղրիւրները բացուեցան, աղգերի ազատութեան ժամանակն հասաւ», բայց մարդկային կենաց մակերեսոյթի վրայ հազիւ նշանաբելի էին ջրի թեթեւ կոհակներ։ մարդկային գործերի ընթացքը իւր սովորական կարգով շարունակուեց և իւրաքանչիւր ոք զբաղուած էր իւր սեփական նախագծերով։

Որքան ժամանակ կոյսն Մարիամ իւր սուրբ Մանկան հետ մնաց այդ այրում կամ անամնոց ախոռում չէ կարելի որոշել։

Թարգմ. ՄԻԱԲԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ԷՇՄԻԱՆԻ ԳՐԸՆԵՐԸ

Ազգի պատմութիւնը, նորա կեանքի հայելին է, որոյ մէջ պարզապէս երեսումէ այդ կեանքն իւր իւր բոլոր մանրամասութեամբ։ Խնչպէս ազգի կատարելութիւնք, նոյնպէս և պակասութիւնք ճշգութեամբ արտափայլում են այդ հայելու մէջ, և տալիս են իրանց ճանաչել, որպէս զի աղքն էլ կարող լինի հոգալ թէ իւր կատարելութեանց զարգացման և թէ իւր թերութեանց ջնջման համար, սոցա վնասակար հետեւանքներից իրան ազատ պահելու դիտմամբ։ Որքան այդ հայելին ընտիր է և պատկերը ճշգութեամբ ցոյց տուող, այնքան էլ ազգի կեանքի տարրներն աւելի պարզութեամբ կերեւեն նորա մէջ։ Այսպէս ուրեմն, որքան ազգի պատմութիւնն աւելի մըշակուած է, որքան աւելի քննութեան բովքից անցած են ազգի կեանքի ամեն տարրները, այնքան և աւելի պատմութեան օգուտը մեծ է։ Անցեալ ներկային խրատ է, և ներկայն ապագայի տնօրէնը։ Աղագայի համար պիտի աշխատի ներկան, իսկ